# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 14 | արտացոլող բաճկոնակներ | արտացոլող բաճկոնակներ | արտացոլող բաճկոնակներ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Երեսացուն 100% պոլիեսթեր, ռետինապատ ծածկույթով 220 գ/մ2 խտությամբ, արտացոլող դեղին գույնի գործվածք: Բաճկոնը բաղկացած է 2 առաջամասի լանջափեշերից և մեկ հետևամասից: Առաջամասի ձախ կողմի պլանկան և օձիքը, կողքի գրպանները մշակվում և եզրապատվում են սև գույնի համանման գործվածքով: Բաճկոնի առաջամասը մշակվում է կափույրով ծածկվող սև գույնի պլաստմասե 65-70 սմ չափի շղթայով: Բաճկոնի առաջամասի կափույրի վրա 20 սմ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հեռավորությամբ կարվում են 5 հատ կպչուն ժապավեններ 2.5*4.0 սմ չափսի: Առաջամասի ներքևի փեշերին տեղադրվում են 19*18 սմ չափի կափույրով ծածկվող վրադիր գրպաններ: Բաճկոնի աջ կողմի կրծքամասում կարվում է ««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»» մակագրությամբ 15*4 սմ սև գույնի կլինկոր անդրադարձնող գործվածք՝ սպիտակ երիզով: Ձախ կողմի կրծքամասին տպագրվում է ՀՀ զինանշանը: Բաճկոնի թիկունքային մասում տեղադրվում է ««POLICE»» մակագրությունը 20*10 սմ չափսի սև գույնի կլինկոր անդրադարձնող գործվածք՝ սպիտակ երիզով: Բաճկոնի միջնամասում 2 շրջագծով՝ առաջամասին և հետևամասին վրադիր կարվում է 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավեններ: Ժապավենների հեռավորությունն իրարից 7 սմ: Նույն կերպ բաճկոնի թևերին կարվում են 2 շրջագծով՝ 5 սմ լայնությամբ անդրադարձնող լուսային ժապավեններ: Թևքերի բերանները մշակվում են 1.5 սմ լայնքով առաձգական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ժապավենով/ռեզին/: Կանգուն օձիքի հետևամասում պլաստմսե շղթայով փակվող ներկարված գրպան, որի մեջ տեղադրվում է անձրևանոց /կապիշոն/: Անձրևանոցը երեսացույի կտորից: Դիմացի մասի եզրակարի միջով անցնում է դեղին պարան պլաստմասե փականներով: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 10 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Նմուշը և չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 14 | | | | | |